– 73. Ապա ուրեմն աստուած և որդի աստուծոյ է մարմնացեալն քրիստոս: - 73. Եւ կուրին ասէր, «որ տեսերդ՝ և որ խօսիդ ընդ քեզ նա՛ է որդին աստուծոյ»:
– 73. Ապա ուրեմն երևեալն մարմնով և խօսեցեալն է որդի աստուծոյ և մի ընդ հօր: - 73. Չորեքտասաներորդ՝ պօղոս ասէ ի փիլիպպեցւոցն «որ ի կերպարանս աստուծոյ էր՝ զկերպարանս ծառայի էառ. ի նմանութիւն մարդկան եղև». և այլն: - 73. Ապա ուրեմն մի՛ է որդին աստուծոյ և որդին մարմնացեալ և մարդացեալ աստուած: - 73. Ապա ուրեմն մի աստուած է և մի որդի հաստիչն ամենայնի և անդրանիկն մեռելոց: - 73. Եօթնևժերորդ՝ ասէ աւետարանն յօհաննու, «այնպէս սիրեաց աստուած զաշխարհս՝ մինչև զորդին իւր միածինն ետ». այսինքն ի մահ: - 74. Ապա ուրեմն չարչարեալ և մեռեալ մարդն է որդի աստուծոյ: - 74. Ապա ուրեմն մարմինն քրիստոսի աստուած է: - 74. Վասն այն ասէ աստուածաբանն, «աստուած խաչեալ. աստուած չարչարեալ»:
– 74. Իննևժերորդ՝ թէպէտ մարդիկ ոմանք կոչին տէր վասն ունելոյ իշխանութիւն ինչ, այլ տէր միայն աստուած է. ըստ այնմ՝ «տէր զօրութեանց. նա՛ ինքն է թագաւոր փառաց»:
– 74. Քսաներորդ՝ որպէս բարձրագոյնքն կարեն ասիլ մարմնոյն վասն միութեանն՝ որպէս աստուած, յարութիւն, և կեանք յաւիտենական: - 74. Այսպէս և խոնարհագոյնքն են աստուծոյ բանին վասն միաւորութեանն. որպէս մարդ ծնանիլ ի կուսէ՛ ժամանակեայ. խաչիլ և մեռանիլ. որպէս ասէ առաքեալն՝ «յիտու քրիստոս երէկ և այսօր՝ նոյն և յաւիտեան»:
– 74. Ապա ուրեմն ճշմարիտ աստուած է քրիստոս մարմնովն միավորեալ անբաժանելի յաւիտեան: - 74. Նոյնպէս իմա՛ և գաստուածն բան. ունելով զնոյն բնութիւն յառանձնութեան իւրում. և միայն միացեալ ի մարմնի և ո՛չ հայր և հոգի ըստ առաքելոյ. «ի նմա բնակէ՛ ամենայն լրումն աստուածութեանն մարմնապէս. որ է՛ էապէս»:
– 74. Նոյնպէս ի մարդեղութեան բանին անբաժան գոլով հայր և հոգի, ըստ որում «ես ի հայր՝ և հայր ի յիսէ» և թէ՛ (հոգւովն աստուծոյ հանեն զդևս»:
– 75. Քրիստոս ըստ մարդկայի՞ն բնութեանն աստուած է, թէ ըստ աստուածային բնութեանն մարդ: - 75. Յորոյ փախչելով մեր և յերկուց ծայրիցն, զառ ի մէջն ունելով ուղղապէս ընթացք, ասեմք եթէ քրիստոս ըստ անշփոթ միաւորութեանն՝ աստուածային բնութեամբն մարդ է, և մարդկային բնութեամբն աստուած է: - 75. Ձի նոյն ինքն քրիստոսոս անուն՝ ուսուցանէ զքեզ աստուածութեամբն մարդ գոլ, և մարդկութեամբն աստուած : - 75. Ուստի ո՛չ ասի քրիստոս սոսկ մարդն, կամ մերկ աստուածն. այլ որպէս ցուցաւ յերկուց միաւորութիւնն: - 75. Վասն

որոյ աստուածային բնութեամբն մարդ է քրիստոս. և մարդկային բնութեամբն աստուած : - 75. Չի աստուած է իւրում բնութեանն. և նոյն մարդ ըստ նորին բնութեամբ միաւորութեանն: - 75. Որև մարդկութիւնն աստուած էր ըստ նորին բնութեամբ միաւորութեանն. և նոյնն մարդ ըստ իւրում յատկութեանն: - 75. Իսկ աստուած զաստուածութիւնն և մարդ զմարդկութիւնն միայն: - 75. Ո՞րպէս ասենք աստուած և մարդ: - 77. Աստուած և մարդ ասել քրիստոսի կրկին է իմացումն: - 77. Ոմանք զբոլորն բաժանեալ ասեն աստուած և մարդ. որպէս նեստորականքն: - 77. Այլ մեք զբոլորն և անբաժան ասենք աստուած և մարդ. այսինքն մարդկութեամբն մարդ, և աստուածութեամբն աստուած: - 77. Նախ՝ զնոյն ինքն բանն՝ աստուած և մարդ. այսինքն մարդկութեամբն մարդ, և աստուածութեամբն աստուած : - 77. Երկրորդ՝ ասել զնոյն աստուածն մարդ. զնոյն մարդն աստուած. ո՛չ փոխարկապէս, այլ փոխատրապէս: - 77. Երրորդ՝ ասի նոյն մարդկութիւնն աստուածութեամբն մարդ, և աստուածութեամբն աստուած: - 77. Եւ զնոյն բանն աստուած՝ աստուածութեամբն աստուած, և մարդկութեամբն աստուած. զի անբաժանելի՛ է. թէպէտ և էր նախ քան զմարդեղութիւնն աստուած, այլ յետ անճառ միաւորութեանն մարմնովն է աստուած: - 77. Յայս օրինակ և ծնեցեալն ի նմանէ ճշմարիտ աստուած և մարդ: - 77. Այսպէս և ծնեցեալն որդի միաւորեալ մարմնովն է և ասի աստուած և մարդ. ի բաղադրեալ միաւորութեանն. և ո՛չ ասի **ք** անձն կամ **ք** բնութիւն: - 77. Դարձեալ՝ ըստ նոյն սարասի՝ բանն աստուած ունի ծնունդ ի հօրէ նախ քան զյաւիտեանս. և ունի ծնունդ ի մօրէ ի յետին ժամանակիս. և ո՛չ ասի երկածին. այլ՝ միշտ միածին. այսպէս նոյն բանն ունի զբնութիւն աստուածոյ ի հօրէ. ունի և զբնութիւն մարդոյ ի մօրէ՛. և ո՛չ ասի **ք** բնութիւն. այլ մի բնութիւն վասն միաւորութեանն: - 77. Այսպէս էր ի հօրէ բնութեամբ՝ և եղև ի մօրէ բնութեամբ. և ո՛չ ասի երկաւոր բնութիւն և երկաբուն. այլ միաւոր և միաբուն. մի որդի. և մի բնութիւն. միատեսակ աստուած մարդացեալ: - 78. Ըստ որում «քրիստոս՝ աստուածոյ զօրութիւն և աստուածոյ իմաստութիւն»: - 78. Այլ և ո՛չ ասի աստուած և մարդ որոշմամբ. այլ աստուած մարդացեալ և մարմնացեալ: - 79. Ապա՝ թէ որոշմամբ ասես աստուած և մարդ, ասա՛ և զճնօղն կոյս՝ աստուածածին և մարդածին: - 79. Իսկ թէ ո՛չ, այլ պարզաբար աստուածածին խոստովանիս ընդ մեզ, ապա՛ և զծնեալն ի նմանէ խոստովանեա՛ աստուած մարմնացեալ և մարդացեալ: - 79. Դարձեալ՝ ծանի՛ր ուղղապէս. զի ասի աստուած մարմնացեալ և մարդացեալ. զի այս միաւորութեան է: - 79. Ասի դարձեալ՝ աստուած մարմնագգեաց. այլ ո՛չ ասի աստուած մարդագգեաց. կամ մարդ աստուածագգեաց. զի այս որոշման է: - 79. Ասի դարձեալ՝ աստուած մարմին եղեալ. և մարդ եղեալ. և մարմին առեալ. այլ ո՛չ ասի մարդ առեալ: - 79. Եւ կիրեղ ասէ՛ «ո՛չ մարդ աստուածացեալ, այլ աստուած մարդացեալ»: - 79. Վասն որոյ ասէր՝ մինն աստուած էր բնութեամբ բանն. աստուած արարիչ և ստեղծիչ: - 79. Իսկ միւսն մարդ էր բնութեամբ յարարեալ և ստեղծեալ բնութենէ. և խառնելով ընդ բանին՝ եղև առեալն որպէս առօղն զո՛յգ և հաւասար աստուած. ըստ այնմ թէ՛ «զնա տէր և օծեալ աստուած արար»: - 79. Վասն որոյ ասէ սուրբն կիրեղ եթէ՛ ո՛չ մարդն աստուածացաւ, այլ աստուած բանն էջ յարգանդ կուսին և առեալ հոգի և մարմին ի նմանէ՛ աստուածն մարդ եղև. ըստ այնմ թէ՛ «բանն մարմին եղև»: - 79. Սուրբն կիրեղ ընդդէմ նեստորի՝ որ **ք** բնութիւն բաժանեալ ասէր քրիստոսի՝ ասաց, մի բնութիւն միաւորեալ աստուած մարմնացեալ և մարդացեալ: - 79-80. Ո՛չ որպէս ապօղինար կարծեաց. այլ աստուած կատարեալ և մարդ կատարեալ. հոգով և մարմնով: - 80. Եւ հաստատեալ այսու եթէ՛ հոգին և մարմինն է միաւորեալ ընդ բանին աստուածոյ, կարգէ՛ և զայն. բայց որդիք ասէ ո՛չ **ք**. և ո՛չ աստուածօք. զայս վասն դիմաց միաւորութեանն ասէ: - 80. Եւ բարձեալ զխտորոցս բաժանման ասէ՛ երկոքեանն մի՛ են. առնլովն աստուածոյ և մարդանալովն. և մարդոյն աստուածանալովն. ահա զբնութեանն միաւորութիւնն եցոյց: - 80. Եւ այսպէս փախչելով ի թիւր ծայրիցն, զմիջինն պահելով ընթացք բարեպաշտութեան, անշթոփ և անբաժան միութիւն, խոստովանիմք զքրիստոս՝ աստուած մարդացեալ. մի անձն և մի բնութիւն. և մի կամք և գործք ըստ ուղղութեանն բանի: - 81. Արդ՝ հողոյ արարածի և աստուածոյ արարչի՝ մի և նոյն բնութիւն ասել ամբարշտութեան է կարծիք: - 81. Այլ նոքա ո՛չ խոստովանին զաստուած մարդացեալ. այլ՝ կամ ի նախագոյացեալ անձն բնակեալ ասեն զաստուածայինն բնութիւն, և կամ շնորհօք որդիացեալ որպէս նեստորի թրլի: - 81. Իսկ որք յերկուցն մի եղեալ բնութիւն ասեն, որպէս աստուածոյն և ի մարդոյն եղեալ մի բնութիւն ո՛չ աստուածոյ և ո՛չ մարդոյ: - 81. Այլ և մի բնութիւն ասեն՝ որք միայն սոսկ մարդ խոստովանին զքրիստոս, և ո՛չ աստուած մարդացեալ: - 82. Որք **ք** անձն և **ք** բնութիւնս՝ և **ք** կամս՝ և **ք** գործս բաժանեն քրիստոսի. **ք** որդի՛ և **ք** քրիստոս այստնապէս ասեն. զմինն տէր, և զմինն ծառայ,

զմինն բնութեամբ որդի աստուծոյ, և զմիւսն շնորհօք. և այլն: - 82. Արդ՝ սոքա զանունն մի ասեն, և յանունն միաւորեն զբ եութիւնսն. այսինքն զաստուածն և զմարդն. և ասեն մի անձն. մի որդի. մի քրիստոս. և այլն: - 82. Եւ բանն քրիստոս կոչի, և յիսուս, և տէր. և աստուած. նոյնպէս և մարդն կոչի քրիստոս, և յիսուս, և տէր, և աստուած: - 82. Իսկ երրորդ դասքն, որք յերկուց ասեն եղալ մի բնութիւն, ո՛չ աստուծոյ և ոչ մարդոյ: - 82. Եւ կամ զմի բնութիւնն ուրացեալ. և կամ առ աչօք ասացեալ. զորս նզովէ սուրբ եկեղեցի աստուծոյ: - 82. Նախ քան զմարդեղութիւնն հեռի ի միմեանց. որքան աստուծոյ և արարածոյ. անեղի և եղականի. ժամանակէի և յաւիտենականի: - 82. Խոստովանիմք զորդին աստուծոյ նախ քան զյաւիտեանս ծնեալ ի հօրէ՛. և յետոյ ի ժամանակի ծնեալ ի մօրէ՛: - 83. Ջնոյն զոլ աստուած և որդի աստուծոյ ըստ հոգւոյ. իսկ որդի մարդոյ ըստ մարմնոյ: - 83. Ո՛չ երկուս բնութիւնս զմին որդին ասելի. «զմինն երկրպագելի և զմինն աներկրպագելի. այլ մի է բնութիւն աստուծոյ բանին մարմնացելոյ»: - 83. Ջնոյն և սուրբն կիրեղ զրէ առ սուկեսոս թղթին, «Մի ասեմք զքրիստոս աստուած մարդացեալ, և մի զբնութիւն նորա»: - 83. Դարձեալ սուրբն յերկրորդ գլուխ աստուածային անուանցն ասէ, «զի և բնութեամբ ի չափ եկն յաղագս մարդասիրութեան. և ճշմարտապէս էացաւ և ա՛յր եղև գերագոյնն աստուած»: - 83. Եւ դարձեալ ասէ «ապա ո՛չ ըստ աստուծոյ զաստուածայինսն զործեալ, և ո՛չ ըստ մարդոյ զմարդկայինսն. այլ՝ այրացելոյ աստուծոյ նո՛ր իմն զաստուած այրականն ներգործութիւն ի մեզ կենցաղավարեալ»: - 84. Երրորդ՝ զի թէ միայն անձամբ միանայ և ո՛չ բնութեամբ, ապա քրիստոս անձամբ և կոչմամբ միայն է որդի աստուծոյ և ո՛չ բնութեամբ: - 84-85. Ո՞րպէս ասէք մի կամք և մի գործ աստուծոյ և մարդոյ: - 85. Որպէս միաւորեալ ասեմք զբնութիւն մարդոյն ընդ եութեանն աստուծոյ, այսպէս միաւորեալ և մի է կամք բանին մարդացելոյ: - 85. Որպէս ասէ սուրբն դիոնէսիոս եթէ՝ «ո՛չ ըստ աստուծոյ զաստուածայինսն զործեալ. և ո՛չ ըստ մարդոյ զմարդկայինսն: - 85. Այլ՝ այրացելոյ աստուծոյ նո՛ր իմն զաստուած այրական ներգործութիւնն ի մեզ կենցաղավարեալ»: - 85. Այսպէս և մի անձն է քրիստոս և մի անհատ. զի թէ բաժանես զնա՛ աստուած և ի մարդ, ո՛չ մնայ բոլորն ի նոյն. այլ մասն ինչ և մասն. կամ ոմն և ոմն: - 87. Նախ զՆիւթն զմի բնութիւն նիւթական որպէս մարդ. և զմիւսն բնութիւն աննիւթ որպէս զաստուած. զՁևն՝ զմինն քանակութեամբ և որակութեամբ տարբերեալ որպէս մարդոյ. և զմիւսն ի վեր քան զկերպ և զձև որպէս աստուծոյ: - 87. Բաժանեն և ուրեք զյատուկ անունն. այսինքն աստուած և մարդ. այս է զմարդկային բնութիւնն մարդ, և զաստուածային բնութիւնն աստուած. որպէս նեստորի թրւի: - 87. Այլ արդ՝ մարդկային բնութիւնն յաստուածութեանն տեսանի, և աստուածային ի մարդկութեանն, եթէ ի միութիւն բնութեանն, և եթէ ի միութիւն անձինն. զի ո՛չ սոսկ մարդ է քրիստոս և ո՛չ մերկ աստուած. այլ աստուած մարդացեալ: - 87-88. Իսկ տէր մեր անւամբ և բնութեամբ է աստուած որպէս խոստովանիմք դասք ուղղափառաց: - 88. Նոյնպէս և քրիստոսն անունն՝ և տէր՝ և աստուած և այլն՝ զո՛յգ և հաւասար է մարդկութեան իւրոյ և աստուածութեանն. և ո՛չ առաւել և նըւազ. կամ տկար և հզօր. կամ անգէտ և ամենագէտ. և որ ինչ այսմ նման: - 89. Իսկ թէ զաստուածային անձն և զմարդկային բնութիւնն ասէք մի քրիստոս, ահա յա՛յտ է զի բաժանեցիք յաստուածային բնութենէն զքրիստոս. զի անձն աստուծոյ և զբնութիւն մարդոյ ասէք մի քրիստոս. և զաստուածային բնութիւնն որոշէք: - 89. Չի եթէ զաստուածային բնութիւնն պատուէք, հա՛րկ է ձեզ զմարդկայինն անարգել՝ և հրեական խտրութեամբ մոլիլ, որք ասէին՝ «դու մարդ ես՝ և զանձն քո աստուած առնես»: - 90. Իսկ թէ զմարդկային բնութիւնն պաշտէք, եղէք կռապարիշտք. և նո՛ր և եղական ոմն աստուած մուծանէք յերրորդութեանն կարգ: - 90. Ահա՛ այս ի կարծոյ բացայայտութիւն ծածկեալ ամբարշտութեանց, որք բ բնութիւնս սահմանեն ի վերայ միոյն քրիստոսի. թպէտ անձն մի համբաւեն համաձայն մեզ, սակայն որոշմամբ բնութեանց լինին տարաձայն մեզ և եկեղեցեացն աստուծոյ: - 90. Չի՞նչ զոր ասէ սուրբն կիրեղ ամենայն ուրեք՝ «հանգամայն աստուած և մարդ»: - 90. Բոլորովիմքն է ընդ դէմ երկաբնակացն. որք մասամբ ասեն աստուած և մարդ զքրիստոս. այսինքն յաստուածութենէ և ի մարդկութենէ ժողովեալ աստուած և մարդ: - 90. Ասէ սուրբն կիրեղ ընդ դէմ նոցա թէ՛ «համանգամայն» այսինքն բոլորովիմք աստուած և բոլորովիմք մարդ: - 90. Դարձեալ՝ որպէս ասեն աստուած և մարդ անհաւասար. այսինքն հզօր և տկար. անեղ և եղական. բնութեամբ և շնորհօք: - 90. Իսկ աստ հաւասար և զոյգ ասէ աստուած և մարդ՝ ըստ Գրիգորի աստուածաբանին. «զոյգ աստուած. որպէս առօղն՝ նոյնպէս և առեալն աստուած»: - 90-91. Իսկ միանգամայնն՝ դարձեալ ընդ դէմ է նոցա Որք զաստուած և զմարդն որոշեն ի միմեանց. եթէ բնութեամբ և եթէ անձամբ: - 91. Որպէս ասելն աստուածն մարդ է՝ և մարդն աստուած: - 91. Այս է միտքն որ ասէ՝ համանգամայն աստուած և մարդ.

այսինքն բոլորովին և հաւասար և անբաժան աստուած և մարդ: - 91. Նմանապէս որ ասէ, մի և նոյն աստուած և մարդ: - 91. Այս է միտքն՝ մի՛ է և ո՛չ ք աստուած և մարդ. և նոյն է և ո՛չ այլ և այլ աստուած և մարդ: - 91. Զի՞նչ պատասխանենք երկաբնակացն որք հարցանեն զմեզ, թէ մասունքն քրիստոսի աստուած է՝ այսինքն ոտքն և ձեռքն և գլուխն ապա բազմաստուածք էք: - 91. Ապա ուրեմն յայտնապէս նոքա ուրանան զայս, և ասեն թէ՛ ձեռքն քրիստոսի ոչ է աստուած. և գլուխն քրիստոսի ոչ է աստուած. և այլն. զի մի բազմաստուածք լիցին: - 91. Ասեն զայս թէ՛ և ո՛չ մարդ չէ. այսինքն ձեռքն և ոտքն քրիստոսի. թող թէ աստուած : - 91. Յորժամ ձեռն քրիստոսի ոչ է աստուած, ապա ուրեմն և բոլոր մարմինն ո՛չ է աստուած. զի բոլորն ի մասանցն բաղկանայ: - 91. Եւ թէ մարմինն քրիստոսի չէ աստուած, և հոգին քրիստոսի չէ աստուած, որպէս նոքա բարբանջեն. ապա և բոլորն քրիստոս չէ աստուած. զի բոլորն քրիստոս յաստուածութենէն միաւորեալ լինի մի քրիստոս. և բաժանեալ ո՛չ է քրիստոս: - 91. Եւ յայտնի եղև թէ և զքրիստոս գոլն ուրանան. և զաստուածն ուրանան այսպիսի առարկութեամբ: - 91. Ասեն այսպէս՝ եթէ ձեռն մարդոյ է՝ զի և ոտն մարդոյ՝ և այլ մասունքն մարդոյ է. զի աստուծոյ մասն ո՛չ ասի: - 91. Երևի ապա զի աստուծոյ ո՛չ ասեն զմասունքն, այսինքն զձեռն և զոտն. ապա ըստ նոցա և մարմինն չէ աստուծոյ մարմին. և արիւնն չէ աստուծոյ. և հոգին չէ աստուծոյ. այլ ամենեքեան սոքա մարդոյ են: - 91. Ասեն զայս թէ՛ քրիստոսի է մարմին. և քրիստոսի է արիւն. և քրիստոսի հոգի. այլ աստուծոյ ո՛չ ասեն: - 91. Ապա ուրեմն երևեցաւ՝ զի թէ մասունքն քրիստոսի ասին և աստուծոյ ո՛չ ասին, յայտ է թէ զքրիստոս ո՛չ խոստովանին աստուած: - 91. Ապա ըստ այսմ հետևի՝ զի մարիամ մայր քրիստոսի լինի և ո՛չ աստուծոյ. զի լաւ է քրիստոսածին և մարդածին կոչիլ՝ քան թէ աստուածածին: - 91. Զայս հարցեր, եթէ մասունքն քրիստոսի աստուած են, նաև բազմաստուած էք. զի բազում են մասունքն: - 92. Զի ասենք զմարմինն քրիստոսի վասն միաւորութեանն աստուած և աստուծոյ մարմին: - 92. Նոյնպէս արիւնն աստուած և աստուծոյ արիւն. և այլն նմանապէս: - 92. Զի թէ ասենք եթէ ոչ է աստուած, յայնժամ բաժանեալ յաստուածութենէն՝ ո՛չ լինի աստուծոյ ձեռն. և ո՛չ աստուծոյ մարմին. կամ արիւն. զի մասն բաժանեալ ի բոլորէն ո՛չ է բոլորին մասն. և ո՛չ կոչի. որպէս ձեռն հատեալ յանդամոցն՝ ո՛չ կոչի մասն բոլորին: - 92. Եւ թէ ասես միայնաբար՝ աստուած է մարմինն. և աստուած է արիւնն, լինի բազմաստուածութեան ցոյցը: - 92. Այլ ասելն՝ աստուած է և աստուծոյ մարմին. հոգի. և այլն. ուղղակի՛ է: - 92. Ապա ուրեմն համանգամայն ի միասին լինին երկու հակակայք. այսինքն ուղղական և հոլովական. զի ասելն աստուած ուղղական է. և աստուծոյ սեռական հոլով: - 92. Ո՞չ ապաքէն ասենք զքրիստոս՝ աստուած և որդի աստուծոյ. զի աստուածն ուղղական է՝ և որդի աստուծոյ հոլովական: - 92. Այսպէս կարենք ասել զմարմինն քրիստոսի թէ՛ աստուած է և աստուծոյ մարմին և արիւն. և այլն ամենայն: - 92. Նմանապէս և մարմինն քրիստոսի աստուած է առ մասունք մարմնոյն. և աստուծոյ մարմին առ բոլորն քրիստոս: - 92. Եւ որպէս քրիստոս աստուած է և կոչի: - 92. Նմանապէս մարմինն քրիստոսի աստուած է՝ և կոչի աստուած և աստուծոյ մարմին: - 92. Ապա ուրեմն կարենք ասել զմարմինն քրիստոսի աստուած և աստուծոյ մարմին, և զայլն նմանապէս: - 92. Այսպէս է համանգամայն ասելն եթէ՛ աստուած է և աստուծոյ մարմին: - 92. Իսկ թէ և որոշակի ասես ուղղափառ մտօք, և ո՛չ այն է զարտուղի. յորժամ ասես աստուծոյ մարմին և աստուծոյ արիւն. զի որ ինչ է՝ ի յաստուած աստուած է և ո՛չ օտար յաստուծոյ: - 92-93. Նմանապէս մարմին և արիւն և ոսկր և այլն աստուծոյ ասել՝ զաստուած ցուցանէ: - 93. Իսկ թէ ասես միայնաբար աստուած է մարմինն՝ և աստուած է հոգին. այսու ո՛չ լինիս բազմաստուած. զի մի՛ է աստուածութիւնն ի սոսա միաւորեալ էութեամբ և գոյացութեամբ: - 93. Նոյնպէս ասելն զնոսա աստուած ո՛չ է բազում աստուած: - 93. Դարձեալ՝ որպէս ասելն զհայր աստուած, և որդի աստուած, և հոգի աստուած, ո՛չ է բազմաստուած. այլ մի աստուած: - 93. Նոյնպէս և ասելն թէ՛ մարմինն քրիստոսի աստուած է. և արիւնն աստուած է. և հոգին աստուած է. ո՛չ է բազմաստուած. այլ մի աստուած: - 93. Թէ զի՞նչ է «լինիլն հաւասար աստուծոյ»: - 93. Առաջինն թէ զի՞նչ է «լինիլն հաւասար աստուծոյ»: - 93. Ասաց թէ՛ որ ի կերպարանս աստուծոյ էր բանն, այսինքն էակից հօր, ո՛չ ինչ զրկումն համարեցաւ ի ներգոյական փառաց զլինիլն հաւասար մեզ: - 93. Եւ դարձեալ՝ զի մի՛ կարծի միայն յամարմնութեանն պատկեր հօր, ի վերայ էած և ի լինելութեանն հաւասար աստուծոյ գոլ նովին մարմնովն առանց յափշտակութեան: - 93. Վասն որոյ ասէ՛ ընդ դէմ ասացելոցս խոնարհութեանց՝ Աստուած զնա առաւել բարձրացոյց: - 94. Աստուած հայր. որ առաքեաց և նրւաստացոյց: - 94. Զիա՞րդ միայն ի դէմս բանին իցէ այն՝ որ ի կերպարանս հօր է և հաւասար աստուծոյ: - 94. Իսկ առաւել բարձրութիւնն. զի որպէս անհամեմատ է խոնարհութիւն աստուծոյ

մարդանալ և չարչարիլ. և անգուգական բարձրութիւն է մարդոյս բնութեան ընդ աջմէ աստուծոյ նստիլ և հաւասարիլ: - 94. Զի որպէս նըւաստացաւ և եղև մարդ, նոյնպէս և շնորիք տըւաւ նմա յաստուծոյ և ի մարդկանէ: - 94. Եւ ասես՝ վասն չարչարանացն խոնարհութեան՝ առաւել զնա բարձրացոյց աստուած: - 94. «Որև կնքեաց զմեզ և եօծ ի սոյն՝ աստուած է. ետ մեզ հոգի որդեգրութեան» ասէ առաքեալն: - 94-95. Եւ աստուած օծաւ. և սոքա մարգարէ կամ այլինչ: - 95. Իսկ սոքա յաստուծոյ և գթութեամբ սիրոյ: - 95. Երևի թէ բաժանես զմարդկութիւնն և ուրիշ իմանաս զմարդն և գաստուածն: - 95. Իսկ թէ միայն անուն առանց էութեան. ապա անամբ խոստովանիս աստուած գրիստոս և ո՛չ գոյացութեամբ. և հաւասարես զնա մովսէսի. որ անուամբ աստուած կոչեցաւ և ո՛չ էութեամբ: - 95. Այլ արդ՝ որ հարցնես թէ՛ մարդն քրիստոս տեսանէ՞ գաստուած թէ ո՛չ. համաձայնիս հրէիցն. որք ասէին՝ «դու մարդ ես՝ և զանձն քո աստուած առնես»: - 95. Եւսի՛ն անօթն ընտրութեան առաքեալն պօղոս գրէ հաւատացելոցս. «քրիստոս աստուծոյ զօրութիւն. և աստուծոյ իմաստութիւն»: - 96. Ա՛րդ՝ քրիստոսն որ է օծեալ աստուածութեամբն, և նա աստուծոյ իմաստութիւն է. և ո՛չ ճանաչէ՞ գաստուած. տգիտութեամբ կորուսանէր զնա և որոյ է՛ իմաստութիւն: - 96. Երկրորդ՝ վկայէ՛ սիրելի աշակերտն յօհաննէս, «գաստուած ո՛չ ոք ետես. բայց միածին որդին նա՛ պատմեաց մեզ»: - 96. Ա՛րդ՝ ի մարդկանէ ո՛չ ոք ետես գաստուած, և որդի կուսին ո՛չ ետես որպէս դուդ ասես. սո՛ւտ է ապա և պատմութիւնն զոր ինչ ուսոյց մեզ. զի ո՛չ է տեսեալ և պատմէ. ահա անդունդք հայհոյութեան. զոր ի կարգիս լռեմ: - 96. Ա՛րդ՝ եթէ տգէտ է որդին աստուծոյ հօր, և տգէտ որդուվ խօսեցաւ ընդ մեզ. տգիտութեան եղիցի և օրէնքս նոր քան զհինն: - 96. Չորրորդ՝ նոյն առաքեալն ասէ, «մեք զմիտս քրիստոսի ունինք. և հազարապէտ ենք խորհրդոցն աստուծոյ»: - 96. Ա՛րդ՝ եթէ քրիստոս տգէտ է և նոքա զմիտս տգիտի ունէին. ո՞րպէս լինէին հազարապետք աստուծոյ խորհրդոցն. կամ հազարապետքն առաւել են քան զխորհուրդն աստուծոյ: - 96. Եւ զծածուկ սրտին զիտել միայն աստուծոյ է՛ ըստ այնմ «որ քննէ զսիրտս և զերկամունս աստուած»: - 97. Զի լիութեամբ շնորհաց նորա մեք արդարացաք. և իմաստութեամբ նորա իմացաք գաստուած որպէս ասէ յօհաննէս. «օրէնք ի ձեռն մովսէսի տըւան. շնորիք և ճշմարտութիւն ի ձեռն քրիստոսի եղեն»: - 97. Այլ արդ՝ յերկնաւոր փառսն այն է զերագոյն՝ որ քան կատարեալ տեսանէ գաստուած: - 97. Ապա ուրեմն հոգին քրիստոսի կատարելագոյն ճանաչէ գաստուած: - 97. Արդ՝ եթէ բոլոր աստուածութիւնն ի քրիստոս էացեալ է մարմնապէս, և ծածկէ զգիտութիւնն ի նմանէ, այս լինի կամ ոչ աստուած մարմնացեալ և մարդացեալ կամ զէութիւնն տըւեալ և ի գիտութենէն զրկեալ որ է սուտ: - 98. Իսկ թէ աստուծոյ բան է և անանց, ո՛չ ուրեմն է տգէտ կամ նըւազ գիտութեամբ: - 98. Ա՛րդ՝ եթէ ի յարութեանն հասարակ արդարք տեսանեն գաստուած դէմ յանդիման որպէս և է, և քրիստոս ո՛չ կարէ տեսանել, փոքր լինի գիտութեամբ քան զմարդ որ է սուտ: - 99. Արդ՝ եթէ առաքեալքն որ բնակարանք են հոգւոյն՝ ճանաչեն զհոգին աստուած, և մարդկութիւնն քրիստոսի ո՛չ ճանաչէ, փոքր քան զբնակարանքն եղիցի քրիստոս: - 99. Եւ ո՞րպէս երկիր պագանեն նմա երկնաւորք և երկրաւորք և սանդարամետականք. և ամենայն լեզու խոստովան լիցի թէ տէր է յիսուս քրիստոս ի փառս աստուծոյ հօր: - 99. Քսանկեբրորդ՝ ասէ յաւետարանին յօհաննու, «Այս են կեանք յաւիտենից՝ զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ աստուած. և զոր առաքեցեր զյիսուս քրիստոս»: - 99. Արդ՝ եթէ ճանաչելն գաստուած հայր և զյիսուս քրիստոս կեանք է յաւիտենից, և մարդն քրիստոս ճշմարտութեամբ ո՛չ կարէ ճանաչել որպէս դուդ ասես: - 99. Եւ օգոստինոս վարդապետ նոցա ասէ ի զիրս Երրորդութեանն, «ըմբռնել զաստուածային էութիւնն՝ պատկանի որդւոյն աստուծոյ ըստ բնութեանն. և որդւոյն մարդոյ՝ ըստ շնորհաց միաւորութեանն»: - 100. որպէս ասէ աստուածաբանն Գրիգոր, «համարձակիմ և ասեմ հաւասար աստուած որպէս առօղն՝ նոյնպէս և առեալն. զի անմարմինն մարմնացաւ. բանն թանձրացաւ. և աստուածն մարդ եղև. մի անձնաւորութեամբ՝ և միաւորեալ բնութեամբ. մի տէր. մի քրիստոս. մի որդի աստուծոյ և որդի կուսին»: - 100. Զի ամենայն ճշմարիտ դաւանօղքն զքրիստոս աստուած խոստովանեցան. և ի նոյնն նահատակեցան. և առ ճշմարտութիւնն քրիստոս յերկրէ յերկինս վերափոխեցան: - 101. Եւ բնութիւնն աստուծոյ անգիտելի: - 101. Եւ թէ՛ անգիտութեամբ գիտելի աստուած: - 101. Ժա) Անժամանակ է աստուած. և յաւիտեան. և հին աւուրց: - 101. Ժգ) Վասն կենաց. և զանազանութեան աստուծոյ. և հրեշտակաց և մարդկան. և կենդանեաց: - 101. Ժդ) Վասն տեսութեան աստուծոյ. և հրեշտակաց. և մարդկան: - 101. Եւ ամենահայեաց է աստուած: - 101. Ժե) Զի՞նչ զանազանի և հաւասարի տեսութեանն աստուծոյ. և հրեշտակաց. և մարդկան: - 101. Ժզ) Վասն թէ բան ունի աստուած: - 101. Ի) Արեգակն կոչի աստուած

ի յատկութեամբ: - 102. Իսկ Վասն զարմացմանն աստուծոյ. և նախանձուն: - 102. Իբ) Սէր և Սիրելի և Բարի է Աստուած: - 102. Իգ) Լայն. երկայն. խոր. և բարձր ասի աստուած: - 102. Վասն էր է բնութիւնն աստուծոյ անգիտելի: - 103. Իսկ բնութիւնն աստուծոյ անեղ է. և զի անեղ է անչափ է: - 103. Յաղագս որոյ և անանուն է աստուած. զի անունն զբնութիւնն յայտնէ. որպէս մարդ: - 103. Իսկ բնութիւնն աստուծոյ անյայտ է և անգիտելի: - 103. Ո՞րպէս անգիտութեամբ գիտելի է աստուած: - 103. Եւ է դարձեալ անգիտութիւն՝ յորժամ զմիտս տարածենք յամենայն եղեալս և զնա ոչ գտանենք, ժողովենք ի մինն որ արտաքոյ է սոցա. և այնպէս անգիտութեամբ ճանաչի աստուած: - 103. Նոյնպէս և էութիւնն աստուծոյ ի յէքս բազմացեալ. և աստուած անունն ի բազում աստուածս. և մնացեալ նոյն մի աստուած ըստ պօղոսի, «մեզ մի է աստուած հայր յորմէ ամենայն»: - 106. Նախ՝ զի միեղէն է և հասարակ՝ գերադրականքն. որպէս գերագոյն աստուած. և տէր տէրանց: - 106. Ըստ այսմ ապա և բազմութիւն արարածոցս միո՛յ են հաղորդեալ. մի սկզբան. մի աստուծոյ. և մի խնամողի: - 106. Ըստ որում մինն ի սուրբ Երրորդութենէն բանն աստուած հաղորդեցաւ բնութեան մերում անքակ միութեամբ. և եղև աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ: - 106. Իսկ հասարակն՝ զի բոլոր բանն աստուած իւրով կատարելութեամբն էառ զբոլոր և կատարեալ մարդկային բնութիւնս. և եղև աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ: - 106. Վեցերորդ՝ որդին աստուծոյ եղև որդի մարդոյ. զի զմեզ արասցէ որդիս աստուծոյ: - 107. Եւ զի որդին աստուծոյ բնութեամբ որդի մարդոյ եղև, մի՛ յերկուանալ թէ լինիցիս և դու շնորհօք որդի աստուծոյ: - 107. Եօթներորդ՝ աստուածն մարդ եղև և յերկիր էջ. զի դու լիցիս աստուած և յերկինս ելցես: - 107. Ըստ որում, «ես ասացի թէ աստուած իցէք». զի ո՛չ էր ի զուր գալուստ նորա. այլ զի մեծամեծ իրս գործեսցէ: - 107. Ուստի յայտ է յորժամ ասենք Երրորդութիւն աստուած. Երրորդութիւն անեղ. այլ ո՛չ ասենք գ աստուած. կամ գ անեղ. այլ մի աստուած և մի անեղ: - 107. Ա՛րդ՝ ասենք զհայր աստուած. և զորդի աստուած. և զհոգի աստուած. ապա կարե՞մք ասել զհայր երրորդութիւն. և զորդի երրորդութիւն. և զհոգին սուրբ: - 108. Եւ զի անձամբ յատկացեալք են և բնութեամբ մի. վասն այն Երրորդութիւն ո՛չ ասի միոյ անձին. այլ աստուած կամ աստուածութիւն ըստ միութեան բնութեանն: - 108. Յասացելոցս ո՛չ ինչ է վայելչական աստուծոյ. բայց միայն ըստ պատճառին: - 109. Ո՞րպէս մի է աստուած, ըստ այնմ «տէր աստուած քո տէր մի է» և թէ՛ «մի է աստուած հայր, և մի տէր յիսուս քրիստոս»: - 109. Իսկ աստուած մի կոչի: - 109. Հինգերորդ՝ մի կոչի. որպէս միակն սկիզբն է թըւոց և ո՛չ թիւ. և աստուած սկիզբն է արարածոց և ո՛չ արարած: - 109. Վեցերորդ՝ միակն պատկելով բազմանայ. և աստուած է շարունակօղ բազմութեան էից: - 109. Եօթներորդ՝ միակն է կատարումն ամենայն թըւոց. և ամենայն գոյից կատարումն է աստուած: - 109. Եւ ի միոյ աստուծոյ եղեն ժ դասք հրեշտակաց ընդ մարդկան. և հարիւր գունդքն ըստ ոչխարաց առակին. և ռ կենդանեաց տեսակքն որ յերկրի. և բիւր անկենդան բուսոց. և անթիւ գոյեղէնք: - 109. Եւ աստուած յայտնի է ի բանականքս իմացմամբ և պատկերաւ. այլ ի կենդանիս և ի բոյսս և ի գոյսս սակաւ ինչ նմանութեամբ: - 109-110. Նմանապէս և արարիչն աստուած. ներքոյ և հիմն է ամենեցուն որ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ: - 110. Նոյնպէս և ի միոյն աստուծոյ իջեալ յարարածս ընդարձակի տեսութիւն մեր. և ի սոցանէ ի նա դարձեալ նեղի: - 110. Նախ՝ զի թիւն պատահումն է. որ ի աստուած ո՛չ է: - 110. Երկրորդ՝ թիւն քանակ է. և աստուած ո՛չ չափի: - 110. Երրորդ՝ թիւն ընդ գիտութեամբ մեր է. իսկ աստուած ընդ գիտութեամբ մեր ո՛չ պարունակի որպէս ասացաք. ապա ուրեմն ի վեր է քան զմի և զմիակ: - 110. Չի է՛ մի՞ որ սկիզբն է թըւոյ. և այսպէս մի ո՛չ ասի աստուծոյ. զի այս քանակ է. և պատահումն ո՛չ գոյ յաստուած: - 110. Եւ է մի՞ որ անդրադարձի էի. և այսպէս ասի մի աստուած իբր թէ է՛. զի պատահումն ո՛չ ցուցանէ: - 110. Եւ էութիւնն աստուծոյ ըստ ինքեան անբաժանելի է, և յարարածոց բաժանեալ: - 110. Ո՞րպէս բազմանայ և բազմապատկի աստուած: - 110. Չի՞նչ է որ ասեն վասն աստուծոյ թէ՛ է՛ սկիզբն և պատճառ: - 110. Վասն է՞ր կոչենք զնա էր. և է՛. և եղիցի. ըստ այսմ. «ես եմ որ էն». և «ի սկզբանէ էր բանն». և եղիցի աստուած ամենայն յամենայնի: - 111. Այլ է՛ յարացոյցն ի յաստուած. և ի տեսութիւն նորա. և ի բարի կամս: - 112. Ա՛րդ՝ ո՛չ է ի յաստուած անձնաւոր էութիւն. որպէս Երրորդական անձինքն. և ո՛չ բաժանեալ ի նմանէ. որպէս հրեշտակաց դասքն. և ո՛չ որպէս սոսկ մտածութիւն ի տեսութիւնն աստուծոյ: - 112. Չի առ աստուած ո՛չէ սոսկ տեսութիւն արտաքոյ. այլ յինքն տեսանելով զյարացոյցն. և զմեզ ի յարացոյցն մեր իբր լինիլ մեզ նախ ի յաստուած, և ապա ի յէութեան մերում. և ո՛չ որպէս փոփոխումն ինչ ի բարի կամացն: - 112. Երբեմն յարացոյց. իբր միշտ ի տեսութիւնն աստուծոյ: - 112. Երբեմն նախասահմանութիւն ըստ պօղոսի՝ «սահմանելոյ որդոյն աստուծոյ». և թէ՛

նախ սահմանեաց զմեզ աստուած ի կամս իւր իբր անփոփոխելի սահմանադրութիւն: - 112. Եւ գիտելի է, զի յարացուցիս և նախասահմանութեանս՝ արարողական պատճառ է աստուած. և նիւթական պատճառ իրն այն որ է նախասահմանի. և տեսական պատճառ է՝ կարգն. զի նախ տըլեալ լինի շնորհքն աստ. եւ ապա փառքն ի հանդերձեալն. և կատարողական պատճառ՝ զի լինիցիմք սուրբք և անբիծք: - 112. Յարացոյցն մի է և պարզ. ըստ այնմ որ մի է էութիւնն աստուծոյ, և մի տեսութիւն, և մի ճշմարտութիւն: - 112. Այլ բազում է և զանազան ըստ պատկերի և նմանութեան յարացուցելոցս որք են բազումք. զի աստուած միով յարացուցի զբազումս տեսանէ. որպէս անմարմնութեամբն զմարմնաւորս տեսանէ. և յաւիտենիւ զժամանակեայս: - 112. Այսպէս մի է յարացոյցն ի մինն աստուած: - 112. Ո՞րպէս անեղ է աստուած, և անեղ ասեմք զոչեսն: - 113. Իսկ անեղ է աստուած արծակապէս և զերագանց. զի անեղ է՝ և միշտ գոյ՝ և ինքնակատար: - 113. Դարձեալ անեղ ասի աստուած իբր պատճառ անեղից. և նախ քան զամենայն անեղ. և կատարումն. և բովանդակութիւն ամենայն անեղի: - 113. Աստուած անեղական բնութիւն. իսկ արարածքս եղական բնութիւն: - 113. Նախ՝ եթէ անեղ է աստուած ըստ որում անսկիզբն և անեղ էին արարածք ըստ անգոյին՝ կարգաւոր է և յոյժ որպէս դու ասացեր. զի անեղ էն աստուած յառաջ էած զանեղն ի յեութիւն: - 113. Դարձեալ՝ զի անեղ է բնութեամբն աստուած. ապա և անհուն է զօրութեամբ. զի եղական բնութեան զօրութիւն հունաւոր է: - 113. Դարձեալ՝ անեղ է բնութեամբ աստուած. և անեղ գիտութեամբ: - 113. Եւ այն է նախագաղափար տեսութիւնն աստուծոյ. ըստ առաքելոյ՝ «ընտրեալ յառաջ քան զլինիլն աշխարհի»: - 113. Արդ՝ եղականքս որ յետոյ էացաք անեղ էաք ի յանեղ տեսութիւնն աստուծոյ: - 114. Արդ՝ կարգաւոր է զի անեղն աստուած զանեղն ըստ տեսութեան՝ յեղելութիւն ածցէ ըստ գոյացութեան իւրեանց: - 114. Դարձեալ՝ անեղն և անսկիզբն աստուած հայր՝ յինքենէ յառաջ քան զյաւիտեանս ծնաւ և բղխեաց զանեղակից որդին՝ և զսուրբ հոգին: - 114. Ո՞րպէս է անժամանակ աստուած, և անժամանակ է հոգի: - 114. Անժամանակ է աստուած...: - 114. Ո՞րպէս յաւիտենական է աստուած. և յաւիտենական հոգին: - 114. Զի աստուած արարիչ է յաւիտենից. և յառաջ քան զյաւիտեանս. և զեր ի վերոյ յաւիտենին: - 114. Զի աստուած պարագրէ զյաւիտեանն. որպէս յաւիտեանն զժամանակն. և ասի աստուած մշտնջենաւոր. զի ո՛չ ունի վախճան: - 114. Վասն է՞ր կոչի աստուած հին աւուրց ըստ դանիելի: - 114. Արդ՝ երեքն ո՛չ յարմարին աստուծոյ. զի ո՛չ հնանայ և ո՛չ ծերանայ. և ամբ նորա ո՛չ պակասին ըստ մարգարէին, «դու նոյն ինքն ես և ամբ քո ո՛չ պակասին»: - 114. Եւ «եկեսցէ օր տեսռն. և օր հատուցման աստուծոյ մերոյ»: - 115. Նախ՝ զի է և գոյ աստուած յամենայն յաւիտեանս. և յամենայն ժամանակ. և յամենայն օր: - 115. Եւ գիտելի է՝ զի աստուած կոչի յաւիտեան անսկիզբն և անվախճան. և է՝ պատճառ պարունակողացն յաւիտենին. որ ո՛չ սկիզբն ունի և ո՛չ կատարած: - 116. Այլ՝ կոչի աստուած յաւիտեան. և միշտ. և ժամանակ. զի պատճառ է սոցա որպէս ասացաւ ի վերոյ: - 116. Եւ թէ որ ասիցէ, որովհետև աստուած յաւիտեան է անսկիզբն և անվախճան. նոյնպէս և յարածգականն: - 116. Ասեմք եթէ՝ մի է յաւիտեան անսկիզբն և անվախճան. որ նոյն ինքն է աստուած. բոլորն համանգամայն և կատարեալ. և նախ քան զյաւիտեանս. և ամենայն յաւիտենից արարիչ: - 116. Այլ զայս ստեղծեալ յաւիտեանս ասեմք ոչ սկիզբն ունիլ և ո՛չ կատարած. զի պարունակօղ է այլ յաւիտենից որք ունին սկիզբն կամ կատարած. այլ ինքն պարունակի յանստեղծ յաւիտենէն որ է աստուած: - 116. Չորրորդ՝ յաւիտենական է աստուած. և մշտնջենաւոր հրեշտակք. և ժամանակեայ մարդիկ: - 116. Յաւիտենական է՝ որ ո՛չ սկիզբն ունի, և ո՛չ կատարած. որպէս աստուած: - 116. Որո՞վ զանազանի կեանքն աստուծոյ. և հրեշտակաց: - 117. Նախ՝ ի աստուած ինքնակեանք է. զի յինքենէ՝ ունի: - 117. Իսկ հրեշտակք յայլմէ ունին. այսինքն յաստուծոյ: - 117. Երկրորդ՝ զի աստուած կենդանարար կեանք է: - 117. Երրորդ՝ աստուած է անսկիզբն և անվախճան կեանք: - 117. Ո՞րպէս աստուած զանցեալն և զապագայն համանգամայն տեսանէ ներկայաբար. իսկ մեք ո՛չ: - 117. Իսկ պակասութիւնքս այս ո՛չ են ի յաստուած: - 117. Իսկ միտքն աստուծոյ ի վեր է քան զժամանակ. վասն որոյ ներկայաբար զանցեալն և զհանդերձեալն տեսանէ: - 117. Վասն է՞ր է զի աստուած զանգործս և զոչեսն տեսանէ. իսկ մեք զեղեալն և զգործեալն: - 118. Իմաստութիւնն աստուծոյ անեղ է. վասն որոյ զանեղսն որ ո՛չ են եղեալ՝ չափէ: - 118. Իսկ անեղն ի բ դէմս որոշի. որպէս անեղ էն աստուած. և անեղ՝ որ դեռևս ո՛չ է եղեալ և գոյացեալ: - 118. Ապա և երկոքին անեղութիւնքս միայն աստուծոյ են գիտելիք: - 118. Ո՞րպէս տեսանէ աստուած զէքս. զի զգայութիւն ո՛չ ունի. որպէս մեք ներքին զգայութեամբ զիմանալիս՝ և արտաքին զգայութեամբ զերևելիս տեսանեմք: - 118. Անմիտն և անզգայն զոր ասեմք

աստուծոյ, ո՛չ ըստ պակասութեան, այլ ըստ գերազանցութեան է դնելի: - 118. Եւ զի ունի միտ և հանճար՝ ասէ սողոմոն, «աստուած իմաստութեամբ հիմունս էարկ երկրի. և հանճարով իւ»: - 118. Կատարեալ, զի առանց աւելածոյ և պակասութեան. և Անփոփոխ, զի տեսութիւնն աստուծոյ նոյն է: - 118. Դարձեալ է՝ յատկութիւն, զի նախ տեսութիւնն է աստուծոյ, և ապա էութիւն ամենայն իրի՝ տեսութեանն նորա հետևի: - 118. Զի աստուած նախ քան զգործն՝ և յառաջ քան զկամիլն՝ և նախ քան զէանալն տեսանէ. ըստ այնմ, «զանգործս իմ տեսին աչք քո»: - 118. Դարձեալ՝ տեսանէ աստուած ըստ պատճառի. զի ամենեցուն է պատճառ. և ըստ պարունակութեան, որ զամենայն առ ինքն ունի. և ըստ կատարման, որ ամենեցուն է վաղճան և կատարումն: - 118. Զի աստուած ո՛չ արտաքոյ ինքեան ունի զտեսութիւնն. այլ ի ներքս միայն. զի զինքն ի յինքն տեսանէ՝ և զայլս ի յինքն. ապա զեղեալքս ի յարացոյցն որ է տեսութիւնն աստուծոյ որպէս ասացաք: -118-119. Զի՞նչ է որ ամենահայեաց ասի աստուած: - 119. Նախ՝ զի առ աստուած բոլորն տեսութիւն է՝ և լուր՝ և այլն: - 119. Մեք ո՞րպէս տեսանենք զաստուած. իմացմամբ՝ թէ զգայութեամբ: - 119. Սակայն՝ զի թէ էն ըստ որում է աստուած կրկին կերպիւ տեսանի. այս ինքն զհտութեամբ և անգիտութեամբ. դնելով և բացաբառնալով այսպէս: - 119. Նախ՝ հայելով ի կերպարանս և ի նմանութիւնս որ է՝ կարգաւորութիւն արարածոց. և սոքօք ի յարացոյցն սոցա ելանել, և ի նմանէ դարձեալ ի նախատիպ յարացուցին ելանել. և այնպէս տեսանել թէ է՝ աստուած պատճառ ամենայնի: - 119. Դարձեալ՝ և այսպէս տեսանի աստուած. յորժամ միտք յամենայն եղելոց որոշեսցի. նաև յինքենէ՝ զի եղական է. թողեալ զինքն միաւորեսցի յաստուածային ճառագայթն որ անքննելի լոյսն է և իմաստութիւնն: - 119. Այս է՝ զի ի բանն աստուած տեսանեն զաստուած ի յինքն. և զեղեալքս ի յինքն: - 119. Եւ այս է նոցա առաւօտու և երեկոյի ճանաչումն, զի զաստուած տեսանելով՝ նոր լինի նոցա ճանաչումն միշտ՝ որ է՝ առաւօտու: - 119. Եւ զեղեալքս ի յաստուած տեսանելով՝ նոր լինի զհտութիւն արարածոց՝ որ է՝ երեկոյի: - 119. Որո՞վ զանագանի և հաւասարի տեսութիւնն աստուծոյ և հրեշտակաց: - 119. Զի ի մի և ի նոյն բանն աստուած տեսանեն զաստուած, և տեսանեն զեղեալքս ի յարացոյցն իւրեանց: - 120. Այլ այսու զանագանին, զի աստուած ինքնիմաստ ունի զտեսութիւնն. այսինքն յինքենէ՝ է անսկիզբն և անվախճան: - 120. Իսկ հրեշտակք ո՛չ յինքենէ՛, այլ յաստուծոյ սկսեալ և անվախճան. զի առանց մոռացութեան ունին: - 120. Երկրորդ՝ հրեշտակք բարձրանան ի տեսութիւնն աստուծոյ. և մարդիկ խոնարհին և շեղին ի յիմացածոն: - 120. Որպէս գործնականն որ է բարոյականն՝ սկսեալ է ի բարւոյն աստուծոյ. և կատարի առ բարին: - 121. Այսպէս և տեսականն որ է բանականն՝ սկսեալ է ի ճշմարտութենէն որ է՝ բանն աստուծոյ, և կատարի առ նոյն ճշմարտութիւնն: - 121. Վասն է՞ր ասենք աստուծոյ բան ունիլ. ըստ այնմ «բանիւ տեառն երկինք հաստատեցան»: - 121. Երրորդ՝ զի բանս մեր ձայնիւ յամենայն լսելիս անցանէ և թղթով յամենայն տեղիս ընթանայ. և բանն աստուծոյ սո՛ւր է և հատու և ընդ ամենայն է քրիստոս անցանէ թափանցաբար: - 121. Հինգերորդ՝ զի ընդարձակի բանս մեր քան զամենայն ինչ. և բանն աստուծոյ ընդարձակեալ է առ ամենայն ինչ՝ զոյացութեամբ և արարչութեամբ: - 121. Եւ թէ ո՞րպէս ասենք ննջել զարթնուլ սրտմտիլ կամ տրտմիլ աստուծոյ: - 122. Այս է զոր ինչ է ի յաստուած դնելով կոչենք զնա: - 123. Կամ ննջել և զարթնուլ. որ ո՛չ է ի յաստուած. այլ դնելով ի վերոյ ըստ ներգործութեանն տարացուցի: - 123. Նոյնպէս որք ուրանան և ասեն, ո՛չէ աստուած քրիստոս. ո՛չէ հայր. ո՛չէ որդի: - 124. Նախ՝ զի ուրացականն ըստ պակասութեան է. որ ասէ ո՛չէ աստուած քրիստոս. այսինքն պակաս է և ո՛չէ աստուած. և ո՛չէ հայր. և ո՛չ որդի: - 124. Երկրորդ՝ ուրացականն ընդդէմ էութեան և փառացն աստուծոյ է. զի զէութիւն և զփառս աստուծոյ ուրանալ տայ: - 124. Իսկ բացբարձականքն՝ ո՛չ զէութիւն կամ զփառս աստուծոյ բառնայ, այլ զոր յետ էութեանն աստուծոյ է և ի նմանէ ստեղծեալ՝ և զխոնարհութիւնսն բառնայ: - 124. Տես և համեմատեա՛ առ աստուած թէ պիտի: - 124. Եւ սեր առ աստուած բանիւն բորբոքեցաւ. ըստ որում, «հուր եկի արկանել յերկիր»: - 125. Եւ միջնորդ հաշտութեան է քրիստոս աստուծոյ և մարդկան. այլև հրեշտակաց և մարդկան. նաև հրէից և հեթանոսաց: - 126. Զարմանալ ո՞րպէս ասի աստուծոյ: - 127. Այսպէս վասն գերազանց սիրոյն զոր ունի աստուած առ էսս՝ զարմանալ ասի. այսինքն արտաքս ելանել՝ թափիլ և հեղուլ ի յեսս. և միաւորիլ անփոխաբուն բնութեամբ: - 127. Վասն որոյ հիացական կոչի անունն աստուծոյ: - 127. Ո՞րպէս է նախանձն ի յաստուած. ըստ այնմ, «ես աստուած նախանձն տեմ». զի նախանձն ախտ է առ մեզ: - 127. Որպէս ասի զաստուծոյ զարթնուլ բարկանալ զարմանալ: - 128. Այլ սերն և փափագն ասի նախանձ զաստուծոյ: - 128. Իսկ նախանձն աստուծոյ պարզապէս միայն ունի սիրել և զայլս և ո՛չ ատել. զի

Գախաճանաչման աստուծոյ սիրոյ առաւելութիւնն է. որպէս բոցն հրոյ: - 128. Նախ՝ զի պատկեր է Եմա. և ապա զի փառաբանիչ աստուծոյ: - 128. Ո՞րպէս կոչի աստուած սիրող՝ և սեր և սիրելի: - 128. Երկրորդ՝ զի եութիւնն աստուծոյ սէր է. և շարժի՝ սիրել զմեզ. և շարժէ՝ զմեզ սիրել զինքն: - 128. Բարի՞ն է առաջին աստուած, թէ սէրն: - 128. Պօղոս առաքեալն ասէ, «Զի՞նչ է լայնութիւն՝ երկայնութիւն՝ խորութիւն՝ և բարձրութիւն աստուծոյ»: - 129. Լայնութիւնն է ընդարձակ ճանապարհ աստուծոյ. որ է Գախաճանաչման նորա յամենայն էրս: - 129. Այլք ասեն թէ՛ է՛ ի աստուած լայնութիւն սիրոյ, որով յետս դարձուցանէ զմեզ ի մոլորութեանց վասն առաւել սիրոյն: - 129. Ծանիր զայս, զի աստուած է միայն իմացական և ո՛չ իմանալի. և հրեշտակք իմացական և իմանալի. զի իմացականք են վերինքն. և իմանալի ներքինքն: - 130. Վասն է՞ր զանազանապէս տայ աստուած զպարգևս և ո՛չ հաւասար. որպէս առաւել տայ հրեշտակաց՝ և սակաւ մարդկան. և նրւազ կենդանեաց և տնկոց և անշնչից: - 130. Նախ է՛ գործ իմաստութեան աստուծոյ. որով զանազանեսցին արարածք՝ առաւել և նրւազ ընդունելով. և մի՛ խառնափնդոր և անզանազանապէս: - 130. Իսկ նոցայն է արիութիւն և սէր առ աստուած: - 132. Մարդն՝ զի այրացեալ աստուած. և արժուին՝ զի հոգին ի վերուստ պարգևեալ: - 132. Իսկ աստուած կարէ՛ փոխել և զկամքն՝ որ է՛ ատրժակ ի չարէն առ բարին. զոր հրեշտակք ո՛չ կարեն փոխել. այլ միայն զարթուցանեն զատրժակն և օգնեն: - 133. Զի աստուած առնէ զբոբիքունն ատրժակին. որպէս հուր որ վառէ՛ զփայտ: - 133-134. Վեցերորդ՝ են առ աստուած ի յինքեանս՝ և յեղեալս: - 134. Ասենք եթէ՛ նոքա երեքեան դասքն՝ այսինքն աթոռք՝ քերօքէք՝ և սերօքէք՝ միակարգ միապատիւ և զերազանց եութիւնք են. զի անընդմիջաբար աստուծոյ ամենայն լուսափայլութիւնք իմաստք և շնորհք ի նոսա հեղանին համակարգապէս. և ապա նոքօք յայլ ամենայն գոյս երկնաւոր և երկրաւոր: - 135. Երկրորդ՝ զի աթոռքն վերաբերին ի դէմս հօր. ըստ այնմ՝ «աթոռ քո աստուած յաւիտեան». և թէ՛ «աթոռք եղան և հին աւուրցն նստաւ» որ է՛ հայր: - 135. Նախ՝ զի սերօքէն խոկայ զբարութիւնն աստուծոյ. և քերօքէն զճշմարտութիւնն. և աթոռք զուղղութիւնն: - 135. Որև յայլուրեք ի քերօքէս ասի նստել. զի ամենեքեան աստուածակիրք են և հանգիստ կամացն աստուծոյ: - 135. Դարձեալ՝ յառաջինսն տիրէ աստուած իբր մեծութիւն. ի յերկրորդսն կառավարէ իբր զօրութիւն. ի յերրորդսն պարսպէ իբր փրկութիւն: - 135. Դարձեալ, ի յառաջինսն կառավարէ՛ աստուած իբր նախապետութիւն: - 136. Եւ թէ՛ ոք ասիցէ, վասն էր մարդիկք հրեշտակք կոչին. նաև հրեշտակք աստուած որ վերնոցն են կոչմունք: - 136. Արդ՝ որ քան սրբութեամբ և իմացմամբ աստուածատեսակ լինին աստուածք կոչին. եթէ հրեշտակք և եթէ արք սուրբք որպէս մովսէս: - 137. Դարձեալ՝ աստուածք կոչին ո՛չ փաղանունաբար, այլ հոմանունութեամբ. այսինքն անւամբ միայն, այլ ո՛չ բնութեամբ: - 137. Վեցերորդ՝ զի հնազանդեալք են ի սպաս կամացն աստուծոյ: - 137. Եօթներորդ՝ զի երանեալք են ի սէրն և ի տեսութիւնն աստուծոյ: - 137. Երրորդ՝ տեսութեամբն և իմացմամբն աստուծոյ. զի ոմանց առաւել է և ոմանց նրւազ: - 137. Երրորդ՝ զի անբաժանելի է յունօղսն. որպէս աստուած և ի հրեշտակս, այսպէս և ի մարդն արժանացեալ. զի ունակութիւն է յարամնայ և կնիք անբակտելի: - 138. Նախ՝ զի աստուած ինքնակատար և նախակատար է քահանայապետութիւնն: - 138. Երկրորդ՝ զի աստուած միշտ տայ և ո՛չ առնու: - 138. Երրորդ՝ զի աստուած անսկզբնապէս և բնութեամբ ունի: - 138. Նախ՝ զի առաջին դասքն անընդմիջաբար առնուն աստուծոյ. իսկ միջինքն և վերջինքն միջնորդութեամբ: - 138. Ապա յայտ է թէ՛ ո՞րպէս է հասարակ և զանազան քահանայապետութիւնն առ աստուած ի հրեշտակս և ի մարդիկ: - 139. Նախ՝ զի աստուած մերձաւոր է նոցա: - 139. Երկրորդ՝ զի կամքն աստուծոյ հանգուցեալ է ի նոսա և ուղղէ: - 139. Հինգերորդ՝ զի անխտոր են տեսութեամբն ի աստուած: - 139. Երբեմն զբարոզութիւնն ասէ. ըստ այնմ, «շնորհքն յաճախեալ ի բազմաց գոհութենէ առաւելացին ի փառս աստուծոյ»: - 139 - 140. Երբեմն զնշան և զարուեստն կոչէ. ըստ այնմ, «ո՛չ մարմնեղէն իմաստութեամբ, այլ շնորհօք աստուծոյ շրջեցաք յերկրի»: - 140. Իսկ թէ աստուած ո՞րպէս գիտէ զթիւ ամենայնի ըստ այնմ, «ո՛ թըւէ՛ զբազմութիւն աստեղաց». զայս ասենք ըստ եռակի: - 141. Իսկ առ հրեշտակս բոլոր շարժումն է ի նոյնէ ի նոյն. որպէս անիւն զոր ետես եզեկիէլ. այսինքն ի նոյն աստուծոյ են սկսեալք, և ի նոյն անվախճանապէս մնան: - 142. Իսկ ուղիղ շարժի՛ յորժամ ի ձեռն զգայութեանց յարացուցիւ և օրինակաւ հպիմք ի նախատիպն աստուած: - 142. Իսկ կողմնաւոր՝ ի խնամելոցն առ աստուած դարձողապէս միացունն յառաջին սկիզբն: - 142. Բոլոր է՛ յորժամ զիմացունն մտաց յամենայն եղելոց առ ինքն ժողովէ՛, և այնպէս բոլորովիմք աստուած հպի և միանայ. և այս է ի բոլոր սրտէ և ի բոլոր մտաց սիրել աստուած. և զայս ունին ընտրեալքն մարգարէք և առաքեալք: - 142. Իսկ

զնդակ որ է կողմնաւոր՝ շարժի հոգին, յորժամ բնականապէս լուսափայլի յաստուածային գիտութիւնս տեսութեամբ և մտածութեամբ. և այնպէս հոգեպէս ի յաստուած միաւորի. որպէս աշակերտաց առաքելոց և մարգարէից: - 142. Է՛ որ իմացումն մտացն առ ինքն ժողովի ի յիշողականէ՛ ի տրամախոհութեանցն ի կարծեաց՝ և յայլոցն, և այնպէս ըստ ինքեան տեսութեանն ի աստուած հպի. այս է գերագոյն իմացումն. և կոչի իմացական տեսութիւն: - 142. Եւ է՛ յորժամ իմացումն ի յիշողութիւնն ի տրամախոհութիւնն և յայլս բաժանի, և նոքօք իմանայ և տեսանէ գաստուած. և այս ևս է կատարեալ տեսութիւն. և կոչի սա բնական տեսութիւն: - 142. Միատեսակ է՛ յորժամ ըստ ինքեան ժողովէ յամենայն զգայարանաց, և բոլոր և միեղէն սիրով հպի յաստուած. և է՛ այս գերակատար սէր: - 143. Եթէ զգայութեամբ և մարմնով սիրեսցես գաստուած լինի կատարեալ սէր: - 143. Իսկ որ ի յայլս՝ որոշի յերիս. այսինքն ի վերնագոյնն, որպէս յաստուած ի հրեշտակս և ի սուրբս: - 143. Արդ՝ ներքնագոյն սիրովն խնամէ աստուած զարարածս. և առաջին դասք հրեշտակաց զվերջինսն. և հարք զորդիս. և վարդապետք զաշակերտս. և իշխանք զիշխեցեալս. տեսարք զժառայս. և այս սիրովս շարունակին ընդ նոսա: - 143. Եւ զի՛ գութն յատուկ տեսանի յանբան կենդանիսն, և սէրն յատուկ է առ աստուած: - 144. Առաջին՝ գաբրիէլ. որ է՛ պատկեր աստուծոյ: - 144. Երկրորդ՝ միքայէլ. որպէս գաստուած կամ հօր: - 144. Չորրորդ՝ անայէլ. որ է՛ լրումն աստուծոյ: - 144. Հինգերորդ՝ ուրիէլ. տեսումն աստուծոյ: - 144. Ութերորդ՝ աղոնիէլ. տեսոն իմոյ աստուծոյ: - 144. Իններորդ՝ փանուէլ. յայտնութիւն աստուծոյ: - 144. Եւ փառաբանութիւն է նոցա, փառք ի բարձունս աստուծոյ: - 144. Եւ ասեն՝ աթոռ քո աստուած յաւիտեանս յաւնտենից: - 144. Արդ՝ բանիւ մտացն խօսի աստուած ընդ հրեշտակաց. նոյնպէս և հրեշտակք ընդ աստուծոյ: - 144. Դարձեալ՝ աստուած ընդ հոգիս, և հոգին ընդ աստուծոյ: - 144. Դարձեալ՝ դէք ընդ աստուծոյ. զի դիտաւորութիւն ո՛չ կարէ թագչիլ յաստուծոյ: - 144-145. Իսկ բանիւ գործոյ խօսի աստուած ընդ դիւին. նա՛ն հրեշտակք ընդ սատանայի. որպէս որոտ և կայծակունք հրոյ ի վերայ նոցա. ըստ այնմ, «որոտաց տէր յերկնից. և բարձրեալն ետ զձայն իւր ի կարկուտ և ի կայծակունս հուր»: - 145. Այլ և հրեշտակն խօսի ընդ աստուծոյ. զի զբաղձանս իւր ընծայէ՛ նմա: - 145. Չի հոգին խօսի ընդ աստուծոյ բաղձանօքն որ մերկապարանոցն է առաջի նորա: - 145. Չամենայն հրեշտակս բարի արար աստուած, այլ ո՛չ ծայրագոյն բարիս. այլ միջակս. որ է ի մէջ անփոփոխ և փոփոխական բարւոյն. այնպէս՝ զի թէ դառնային և սիրէին զայն՝ որ ի վեր քան զինքեանս, ելանէին յորպիսութիւն շնորհաց և փառաց. որպէս այժմ են հրեշտակք բարիք: - 146. Եւ այնչափ կուրացեալ է՛ մինչ զի պատերազմի ընդ դէմ աստուծոյ. թէպէտ գիտէ զայն լինիլ ինքեան ի չար, զի զոր ինչ չար գործէ անձնիշխան կամօքն, մեղանչէ մահու չափ: - 146. Նախ՝ զի հակառակ է աստուծոյ, և մարդն պատկեր է աստուծոյ. յորժամ տկարանայ ի նախատիպն ընդ պատկերն հակառակի: - 146. Երկրորդ՝ զի կամի այնու զփառս և զպատիւ աստուծոյ նուազել: - 146. Երրորդ՝ զի ի սիրոյն աստուծոյ զրկեսցէ զմեզ. զի կարասցէ յաղթել: - 146. Չի զոր ինչ բնութեամբ ունէին դէք՝ եթող ի նոսա աստուած յետ յանցմանն. և զոր ինչ երանութեամբ ստանալոց էին՝ զրկեցան: - 147. Եւ այլք թէ՛ լռեաց և ո՛չ ետ փառս աստուծոյ: - 147. Նախ՝ յորժամ սերօբէն ասէր սուրբ, և միւսն երկրորդէր զնոյն. և սա՛ լռեաց զփառաբանութիւն ընկերին երկրորդէլ աստուծոյ, թէ փառքն ի վերայ իւր անկանի և աստուածանայ որպէս ասաց պօղոս: - 147. Երկրորդ՝ ասեն թէ՛ ի լինիլ աստեղաց՝ հրեշտակք օրհնեցին գաստուած ըստ յոբայ: - 147. Նոյնպէս և յառնել մարդոյն և յանուն դնելն կենդանեաց՝ փառս ետուն աստուծոյ. Իսկ նա լռեաց: - 147. Չի ասէ աստուածաբանն՝ «յաստուած մերձենայաք և աստուած լինեաք» այսմ որ քրիստոսի գալովս եղև, զոր և յեկեղեցւոյ ուսան հրեշտակք ըստ պօղոսի: - 147. Եւ դարձեալ, զի ամպով և հողմով ասի շարժիլ աստուծոյ. և այսու լինիլ նման այսինքն ի վերայ ամպոց և հողմոց և հրեշտակաց շրջելով: - 148-149. Եւ այլք ասեն այսպէս հակառակիլ ընդ աստուծոյ, յորժամ ետես զինքն փառօք և վայելչութեամբ քան զամենայն դասս գերագանցեալ, կամեցաւ մեծ լինիլ ի վերայ ամենայնի և հաւասար աստուծոյ: - 149. Չլաւագոյն կայս զոր աստուած տուեալ էր նմա՝ կամեցաւ ակամայ յաստուծոյ իւր շորթել. և այլոցն բռնաբար տիրապետել և հրամայել: - 149. Հաճոյ թուեցաւ նոցա բարձրութիւն նորա. խորհելով՝ զի թէ նա աստուծոյ յաղթեալ էր, նոքա ևս այլոցն իշխէին կարողութեամբ: - 149. Ամենայն հրեշտակք զուգապէս ստեղծան յաստուծոյ. և ո՛չ մի ի միոյ. որպէս մարդ ի մարդոյ ծնանի: - 149. Չի աստուած փոխանակ ապաշխարութեան զմահն կամեցաւ. և հրեշտակք անմահք են. վասն որոյ առանց փրկութեան մնացին: - 149. Եւ զի նախագէտ էր աստուած ընդէ՞ր ստեղծ զնոսա որ այնպիսիք եղեն: - 149. Իսկ ոմանք ասեն զտեղի նորա ի հաստատութեան

երկնից. և զի ո՛չ ետուն զփառս աստուծոյ անկան. վկայէ՛ և դաւիթ՝ «Երկինք պատմեն զփառս աստուծոյ». որք են վերնագոյն դասքն. և հաստատութիւն զարարածս պատմէ և ո՛չ զփառս որպէս ցուցաւ: - 150. Որպէս ասէ սուրբն իրինոս զբանս յուստիանոսի, թէ բարուք ասաց վկայն յուստիանոս եթէ՝ «մինչ ի գալուստն քրիստոսի ո՛չ իշխէր հայիոյել զաստուած, զի յո՛յս ունէր դառնալոյ ի փառս. այլ յորժամ լուաւ զպարտութիւն իւր և զարտաքսիլն ի փառաց, ապա քարացաւ ի չարութեան իմաստութեան սիրտ նորա. և անամօթաբար հայիոյեր զնա և մատնիւր յաւիտենից տանջանացն»: - 153. Երրորդ՝ անկումն նոցա էր ակնկալութիւն տանջանցն. և զայս մինչ ի քրիստոս ո՛չ գիտացին զպատրաստեալ տանջանս իւրեանց. այլ յորժամ զբացախօսութիւն գեհեմին լուան ի քրիստոսէ՝ ասէին՝ «մի՛ յառաջ քան զժամանակն տանջէր զմեզ սուրբը աստուծոյ. գիտե՛մք զքեզ զի տանջօ՞ղ ես մեր»: - 153. Երկրորդ) Զանազանութիւն գործոյ աստուծոյ և մարդոյ: - 154. Զորրորդ) Աշխարհ ո՛չ լինի ոչէ. և ո՛չ ապականեալն կոյս. և վասն թողութեան. յորս նախագաղափար տեսութիւնն աստուծոյ: - 154. Վեցերորդ) Ո՛չ է պատահումն ի յաստուած: - 154. Եօթներորդ) Դարձեալ եթէ պատահումն ո՛չ է ի յաստուած: - 154. Տասներորդ) Աստուած բնութեա՞մբ գործէ՝ թէ կամօք: - 154. Երկուտասաներորդ) Պարզ է աստուած. յորս և բնութեամբ միաւորութիւն: - 154. Զնգետասաներորդ) Սի է աշխարհ. և չունի զգայարանք. և թէ ուր էր աստուած. և ուր էր աշխարհ. և յի՞նչ պատճառի ստեղծաւ: - 154. Զի՞նչ զանազանի գործ մարդոյ ի գործոյ աստուծոյ: - 156. Նախ՝ զի գործ մարդոյ շօշափմամբ է. իսկ աստուծոյն առանց շօշափման: - 156. Երկրորդ՝ զի մարդն կարօ՛տ է նիւթոյ. իսկ աստուած անկարօ՛տ է նիւթոյ: - 156. Երրորդ՝ զի կայ ի մարդս որ ի հարկէ՛ առնէ. իսկ աստուած առանց ամենայն հարկի է: - 156. Զորրորդ՝ մարդս պակասութիւն ունի. իսկ աստուած առանց ամենայն պակասութեան է: - 156. Զինգերորդ՝ մարդ թէ բնութեամբ և թէ կամօք գործէ՛ կարօ՛տ է օգնականի, իսկ աստուած անկարօ՛տ է օգնականի: - 156. Վեցերորդ՝ մարդս կարօ՛տ է ուսմանց և իմաստից. իսկ աստուած անկարօ՛տ է ուսման և իմաստութեան. զի ինքն է աղբիւր գիտութեան և իմաստութեան: - 156. Եօթներորդ՝ մարդ կարօ՛տ է ժամանակի. իսկ աստուած ո՛չ է կարօտ ժամանակի. և այլ և զյաւիտեանս արար: - 156. Ութերորդ՝ մարդկան գործ աշխատութեամբ է. իսկ աստուծոյն առանց աշխատութեան: - 156-157. Իններորդ՝ մարդս սխալական է ի գործն. իսկ աստուած առանց սխալման: - 157. Տասներորդ՝ գործ մարդոյս նախ զօրութեամբ՝ և յետոյ ներգործութեամբ եղանի. իսկ աստուծոյն միշտ ներգործութեամբ է. որպէս ցուցանի յառաջիկայդ: - 157. Մետասաներորդ՝ մարդոյս գործ մասնաւոր և մի զկնի միոյ. իսկ աստուծոյն համանգամայն և բոլորովին: - 157. Երկուտասաներորդ՝ կատարած գործոյ մարդոյ ի սկիզբն անգիտելի է. իսկ աստուծոյն ի սկիզբն կատարածն գիտելի է նմա: - 157. Երեքտասաներորդ՝ մարդ զինչ որ կամի ո՛չ կարէ. իսկ աստուած զոր ինչ և կամի և կարէ: - 157. Զորեքտասաներորդ՝ մարդն ո՛չ կարէ արարչագործ լինիլ. իսկ աստուած արարչագործ է: - 157. Զնգետասաներորդ՝ զի մարդ յետ ստեղծանելոյն ո՛չ է ընդ ստեղծուածս իւր. իսկ աստուած յետ ստեղծանելոյն՝ միշտ է՝ ընդ ստեղծուածս իւր նախախնամութեամբ. ըստ այնմ «ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչ ի կատարած աշխարհի»: - 157. Երրորդ՝ զի որպէս իմաստութեամբ արար, ըստ այնմ «աստուած իմաստութեամբ հիմունս էարկ երկրի». այսպէս իմաստութեամբ և նախախնամէ՛ զբոլորն՝ և զի իւրաքանչիւրսն ըստ իւրում պիտոյից զանազանապէս: - 157. Իսկ ի նոյն ինքն՝ առաջին է նախախնամութիւնն առ աստուած, և ապա՛ ստեղծումն. զի վասն նախախնամական բարութեանն կամեցաւ ստեղծանել զեղեալքս. որպէս ասէ սուրբն դիոնէսիոս ի դ գլուխն որ յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց: - 157-158. Զորրորդ՝ զի գործ արարչութեանն մի՛ անգամ է և ո՛չ ևս. ըստ այնմ, «հանգեաւ աստուած յամենայն գործոց իւրոց»: - 158. Զի առնելն է հաճոյական գործ առանց կասկածանաց. որպէս բարի առնել բարեաց, որ է՛ արդարութեանն աստուծոյ. և չար առնել չարեաց, որն այս է՛ խրատ ուղղութեան. այլ բարի առնել չարեաց, այս ողորմութեան է և գրութեան. այսոքիկ առնելոյն են տեսակք: - 158. Իսկ չար առնել բարեացն՝ է գործ անիրաւութեան, և ո՛չ զոյ յաստուած: - 158. Վասն է՞ր թոյլ տայ աստուած արդարոց անկանիլ ի փորձութիւն: - 158. Նախ՝ զի զծածուկ առաքինութիւն արդարոյն յայտնի արասցէ այլոց ամենեցունց. որպէս զյոբայն և զաբրահամոյն. ըստ այնմ որ ասէր՝ «այժմ ծանեայ թէ երկիւղած ես դու յաստուծոյ». այսինքն այժմ ծանուցի: - 158. Զինգերորդ՝ թոյլ տալով լինին ոմանք ի փառս այլոց. որպէս ի ծնէ կուրին. ըստ այնմ՝ «ո՛չ դորա վնաս է և ո՛չ հօր և մօր իւրոյ. այլ վասն փառացն աստուծոյ»: - 158. Մետասաներորդ՝ որպէս հայրն զորդին գան հարու զի զգաստացեալ մի՛ զրկեսցի ի ժառանգութենէ հայրենեացն. այսպէս և աստուած զսուրբս և զսիրելիս իւր խրատէ: - 159.

Երեքտասաներորդ՝ զի տկար մարմնով անմարմին և զօրաւոր թշնամոյն յաղթեսցեն. որով աստուած իսկապէս փառաւորի. տեսանելով զտկարն յաղթել զօրաւորին ըստ այնմ որ զախորժակս իւր յայտնէր սիրելոյն՝ «չա՛տ է քեզ շնորհ իմ. զի զօրութիւն իմ ի տկարութեան քուն կատարի». այսինքն թէ՛ որպէս ես աստուածային մարմնոյս զօրութեամբն յաղթեցի փորձողին, նոյնպէս և դու շնորհօք իմովք՝ տկար մարմնով քո՛ յաղթես և նկուն առնես զնա: - 159. Զորեքտասաներորդ՝ զի գիտասցէ աստանայ զտկարութիւն իւր՝ թէ ո՛չ միայն յաստուծոյ, այլ և ի մարդկանէ յաղթի. ըստ տեսառն որ ասէր՝ «տեսանէի զսատանայ անկեալ յերկնից. և ձեզ ետու իշխանութիւն կոխել զօճս և զկարիճս»: - 159. Զնգետասաներորդ՝ ասէ սուրբն դիոնէսիոս՝ թէ վասն այն տայ աստուած սրբոցն նեղութիւնս և փորձութիւնս, զի նեղութիւնն սիրելի և փափագելի՛ է նոցա. և յայնժամ ուրախանան սուրբքն, յորժամ ի մարմնական հեշտութեանց հեռանան. և արիանան ի փորձութիւնս. և սակաւ նեղութեամբ ժամանեն ի մեծ հանգիստն: - 159-160. Զինչ է որ ասէ՝ «փորձեաց աստուած զաբրահամ». և յակոբոս ասէ՝ «աստուած անփորձէ չարեաց. փորձէ՛ և ո՛չ զոք»: - 160. Ասեն ոմանք թէ փորձութիւնն երեք է. այսինքն ի մարդկանէ՛, ի սատանայէ՛, և յաստուծոյ: - 160. Իսկ աստուած փորձէ զմարդ՝ զի գիտէ զնա՛ բարի և հաւատարիմ. այլ ծածկեալ է յայլոց. փորձէ՛ զի յայտնի լիցի ամենայն աշխարհի առաքինութիւն նորա: - 161. Եւ այսու զանազանի փորձութիւնն աստուծոյ և սատանայի, Նախ՝ որպէս ասացաք՝ աստուած փորձէ՛ զի յայտնեսցէ զբարութիւնն. և սատանայ փորձէ՛ զի հանցէ ի բարւոյն: - 161. Երկրորդ՝ աստուած փորձէ և տայ զհամբերութիւնն. և սատանայ ընդ փորձութեանն առնէ զձանձրութիւն: - 161. Երրորդ՝ աստուած փորձէ՛ և տայ զելն՝ զի մի՛ յուսահատեսցի. և սատանայ փորձէ և ձանձրացուցանէ զի ընկեղմնեսցին: - 161. Զորրորդ՝ զի յետ փորձութեան աստուած զպսակն պարզէ. և յետ փորձութեանն սատանայ, ընդ իւր ի կորուստն յաւիտեական սպանանէ: - 161. Իսկ աստուած գիտէ զառաջիկայն և այնպէս տայ ի փորձանս: - 161. Եւ թէ ոք ասիցէ՛ յորժամ գիտէ՛ աստուած զկատարածն, վասն է՞ր տայ ի փորձանս: - 161. Նախ այս որ ասացաւ եթէ՛ «առցէ զպսակն կենաց զոր խոստացաւ աստուած սիրելեաց իւրոց»: - 161. Իսկ թէ զի՞նչ համբերութիւնն. ասէ՛ «գործ կատարեալ ունիցի». այսինքն թէ՛ նիւթ յաստուծոյ գործոյն՝ փորձութիւնն և նեղութիւնն է. և յօրինօղ՝ հաւատն է. և ի կատարումն ածօղ՝ համբերութիւնն է: - 161. Զորրորդ՝ զի ասէ ոսկեբերանն՝ «անկեղծ սիրոյ կապանք է առատութիւն նեղութեանն». զի կեղծաւոր և անկեղծ սերն առ աստուած փորձութեամբն երևի: - 162. Առ այնոսիկ որք ասեն՝ անկար է յաստուծոյ առնել զաշխարհս ոչ ինչ. մինչ զի ո՛չ երևիլ սկիզբն լինելութեան սորա: - 162. Զի յատուկ է առաջին պատճառին որ է աստուած ի հարկէ եակ գոլ՝ և միշտ ներգործութեամբ, և իսկապէս ներգործութեամբ. որովք տարորոշի յայսցանէ՛ որ կարելի՛ են եակ գոլ. և երբեմն ներգործութեամբ և հանդերձ զօրութեամբ: - 162. Եւ իսկապէս ներգործութեամբ, զի զօրութեամբ որ է՛ անկատար իր ինչ ի յաստուած ո՛չ է. այլ ամենայն ներգործութեամբ. այսինքն ի տեսութիւնն և ի կամքն. ապա ուրեմն անշարժ է տեսութեամբ և կամօք: - 162. Նախ որպէս ցուցաւ միշտ է աստուած էութեամբ և ներգործութեամբ. առ ինքեան միշտ է, և ներգործութիւն իւր առ այլս: - 162. Դարձեալ՝ կամքն յաստուծոյ անփոփոխ է. զի ո՛չ տարակուսի և ո՛չ զղջանայ. ապա թէ արար աստուած զաշխարհս ի գոյութիւն՝ այժմ առնէ յանգոյութիւն, երևի փոփոխումն անփոփոխելոյն. կամ զղջումն և երկբայութիւն. որ օտար է արարչականն կամաց: - 162. Դարձեալ՝ կամքն աստուծոյ անփոփոխ է. զի ո՛չ տարակուսի և ո՛չ զղջանայ. ապա թէ արար աստուած զաշխարհս ի գոյութիւն՝ այժմ առնէ յանգոյութիւն, երևի փոփոխումն անփոփոխելոյն. կամ զղջումն և երկբայութիւն. որ օտար է արարչականն կամաց: - 162. Եւ թէ ոք ասիցէ, եթէ աստուած զոր ոչ կամի՛ ո՛չ կարէ, որպէս զչար զի ո՛չ կամի և ո՛չ կարէ. նոյնպէս զմեղս և զայլսն. ապա երևի անկարութիւն ի յաստուած գոլ: - 163. Իսկ առ աստուած կամքն և կարն հաւասարք զոն. վասն որոյ հակադարձին ի միմեանս. զի զոր ինչ կամի՛ կարէ՛. և զոր կարէ՛ զնոյն և կամի՛: - 163. Դարձեալ ասեմք, ամենակար և ամենագօր է աստուած. և որ ամենայնի կարօղ է և հօր, ո՛չ է անկար: - 163. Նմանապէս և աստուած ո՛չ կարէ զչար, զի առաւել կարէ զբարին: - 163. Նախ՝ զի որպէս շինօղ տաճարին զսկիզբն և զկատարումն ետես. այսպէս և արարիչն աստուած ի կրկին սկիզբն գործոյն զկատարումն աշխարհի ետես: - 163. Երկրորդ՝ զի բանիւ գործէ արւեստաւորն. այսինքն իմաստութեամբ և կամօք. այսպէս և արարիչն աստուած զամենայն եղեալքս կամեցաւ և արար «և բանիւ տեսառն երկինք հաստատեցան» ասէ: - 164. Նոյնպէս թէ և իցեն հրեշտակք արբանեկեալք ի ստեղծումն գոյից, սակայն միմն է աստուած պատճառ ամենայն գոյից: - 164. Եւ մեք ի տեսանել զարարածս՝ իմանամք զարարիչն. ըստ որում «երկինք պատմեն զփառս յաստուծոյ»: - 164. Իսկ

